

Արձանագրություն N 1-06/20
«Բարձր տեխնոլոգիաների տեղեկագիր» գիտական հանդեսի
համակարգող խորհրդի 2020թ.-ի հունիսի 8-ի նիստի

Նիստին մասնակցում էին «Բարձր տեխնոլոգիաների տեղեկագիր» գիտական հանդեսի համակարգող խորհրդի անդամներ Հովհաննես Թոքմաջյանը (տ.գ.դ.), Պարգև Բալայանը (տ.գ.դ.), Վահան Ավետիսյանը (տ.գ.դ.), Մհեր Մարկոսյանը (տ.գ.դ.), Վաչե Թոքմաջյանը (տ.գ.դ.):

Հրավիրված էին հանդեսի խմբագրական խորհրդի անդամներ՝ Արևշադ Վարդանյանը (տնտ.դ.), Ալբերտ Մարգարյանը (տ.գ.դ.), Սուսաննա Մեսրոպյանը (պատասխանատու քարտուղար):

Նիստին մասնակցում էին խորհրդի 8 անդամներից՝ 5-ը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Խմբագրական խորհրդի որոշումների հաստատման մասին:
2. Այլ հարցեր:

1 Լսեցին - Խմբագրական խորհրդի որոշումների (արձանագրություն N 1-05/20) հաստատման մասին:

Որոշեցին

- 1.1. Բարձր տեխնոլոգիաների տեղեկագիրը տպագրել տարեկան չորս համար՝ յուրաքանչյուրը՝ 101 օրանակ տպաքանակով և, անհրաժեշտության դեպքում, հատուկ թողարկումներ, այդ թվում, թողարկում՝ ուսանողական գիտաժողովի նյութեր հրատարակելու համար:
- 1.2. Հաստատել Տեղեկագրի հրատարակման հետևյալ խորագրերը՝ **Agriculture, Architecture and Construction, Economics, Information and Communication Technologies, Machine Industry and Logistics, Natural Sciences, Water Systems:**
- 1.3. Հեղինակը հոդվածը պարտավոր է ներկայացնել անգլերեն և հայերեն կամ ռուսերեն լեզվով, ինչպես նաև հոդվածի ամփոփագիրը անգլերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով: Արտերկրից հոդված ներկայացնելու դեպքում, պարտադիր համարել միայն անգլերեն լեզվով ներկայացված հոդվածն ու ամփոփագիրը:
- 1.4. Հաստատել հոդվածի տեքստի չափորոշիչները՝ համաձայն հավելված 1-ի:
- 1.5. Հոդվածը տպագրության է երաշխավորվում խմբագրական խորհրդի կողմից՝ խմբագրական խորհրդի անդամի կամ գրախոսման ուղարկված մասնագետի կարծիքի հիման վրա: Կարծիքը կարող է ներկայացվել ազատ շարադրանքով, սակայն, պարտադիր կերպով, այն պետք է ունենա եզրակացություն գիտական նորույթի վերաբերյալ:
- 1.6. Հաստատել խմբագրական խորհրդի կազմը համաձայն հավելված 2-ի:
- 1.7. Քայլեր ձեռնարկել տեղեկագրի խմբագրական խորհրդի կազմը արտասահմանյան անդամներով համալրելու ուղղությամբ:

2 Լսեցին - Այլ հարցեր:

Որոշեցին.

Քայլեր ձեռնարկել հոդվածի տեքստի անգլերեն լեզվով շարադրանքը կատարելագործելու ուղղությամբ:

Նախագահ՝

Համակարգող խորհրդի նախագահ տ.գ.դ., պրոֆեսոր



Խորհրդակցություն

Ս.Վ.Մարկոսյան